



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
ИМЕНИ В. БРЮСОВА  
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ  
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ  
В. БРЮСОВА  
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

---

**ԼԵՋՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ**

**LINGUISTICS AND PHILOLOGY**

**1 (58)**

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆ - 2021**

ՄԱՐԴ-ԿԵՆԴԱՆԻ ԱՂԵՐՍՆԵՐԸ ԶԵՔ ԼՈՆԴՈՆԻ ԵՐԿԵՐՈՒՄ

ՄԱՐԻԱՄ ՀԱԿՈՐՅԱՆ

*Հիմնաբառեր՝ քաղաքակրթություն, հումանիզացում, միջանձնային հարաբերություններ, վայրի բնություն, երազների տեսություն, էդիպյան բարդույթ, կենդանի-հերոս*

Երբ բախվում են քաղաքակրթությունն ու վայրի բնությունը, գոյության պայքարն անխուսափելի է: Ջեք Լոնդոնի «Սպիտակ ժանիք» և «Նախնիների կանչը» վեպերում այս երկու իրարամերժ և միևնույն ժամանակ փոխկապակցված աշխարհների սահմանագծին կանգնած է կենդանի-հերոսը, որի ապրումներն ու վարքային դրսևորումները մարդու ներգործության հետևանք են:

Հոդվածում քննության է առնվում ոչ միայն վերոնշյալ հանգամանքներում գտնվող կենդանի-հերոսի զուգորդումները հեղինակի հետ (ուսումնասիրվում է կերպարների հարաբերությունների և հեղինակի միջանձնային հարաբերությունների ընդհանրությունների վերլուծության շրջանակներում՝ հիմք ընդունելով ֆրոյդյան հոգեվերլուծական տեսությունները, մասնավորապես՝ երազների տեսություն, էդիպյան բարդույթ), այլև առհասարակ մարդ-կենդանի աղերսների առաձնահատկություններն ու դրանցով պայմանավորված հոգեբանական գործոնները, որոնք, ըստ էության, տրամաբանորեն շղթայվում են առաջին խնդրին: Սրանով էլ պայմանավորված է ուսումնասիրության նորույթն ու արդիականությունը:

Աշխարհահռչակ ամերիկացի գրող Ջեք Լոնդոնի (Ջոն Գրիֆֆիտ Չեյնի 1876-1916) ստեղծագործություններում մարդ-կենդանի սերտ աղերսակցությունն իր առանձնահատկությունների շնորհիվ հասնում է այնպիսի մակարդակի, որտեղ կենդանին հավասարվում է մարդուն: Լոնդոնյան կենդանի-հերոսի նմանօրինակ պատկերումը ենթադրում է, որ սույն թեմայի վերաբերյալ արձակագիրն ունեցել է գերաթմուրված դիրքորոշում:

Ջ. Լոնդոնն արժանացել է «գայլերի և շների վարպետ» (master of dogs and wolves) կոչմանը՝ շնորհիվ իր Հյուսիսային պատմությունների, որտեղ կենդանիների թեման առանցքային է: Այս պատմությունների շարքին են դասվում նրա անիմալիստական վիպակները՝ «Սպիտակ

**ժանիք»** ("White Fang" 1905), և «**Նախնիների կանչը**» ("The Call of The Wild" 1903), որոնցում արդեն *շուն-հերոսը* հանդես է գալիս որպես վայրի բնության և քաղաքակրթության բախման պայմաններում գոյության պայքար մղող գլխավոր կերպար:

Ինչու՞ է հեղինակն այդքան անդրադարձել կենդանիներին: Հումանիստական վեհ գաղափարներ կրող Լոնդոնը ցնցված էր այն անմարդկային վերաբերմունքից, որին ենթարկվում էին խստաշունչ հյուսիսի անտարբերության մեջ գոյության պայքար մղող լծկան շները: Ռուս գրաքննադատ Կոնստանտին Տրունինն իր «Ջեք Լոնդոն, Սպիտակ ժանիք» հոդվածում գրում է. «*Հյուսիսը դաժան է բոլորի նկատմամբ, հարկապես նա դաժան է նրանց նկատմամբ, ովքեր փորձում են միայնակ հաղթահարել այն: Միայնակ մարդը չի գոյարկի Հյուսիսում, ինչպես չի գոյարկի միայնակ գայլը: Երկուսին էլ կուտեն: Եվ մինչ գայլերն ուտում են Հյուսիսում թափառող շներին, մարդիկ դրան առանձնակի նշանակություն չեն տալիս՝ դիտելով դա որպես հեղափոխությանն արժանի հասարակ մի իրողություն» (12):*

Նշված վեպերը գրաքննադատության են ենթարկվել տարբեր դիտանկյուններից, որոնք միավորվում են կենդանիների անձնավորված կամ մարդկայնացված լինելու (այլ կերպ՝ հումանիզացված՝ անգլերեն "humanized" բառից) վիճահարույց խնդրի շուրջ, որից անխուսափելիորեն բխում է հետևյալ հարցը. արդյո՞ք նշված վեպերի պրոտագոնիստներ Բաքը և Սպիտակ ժանիքը, այսինքն՝ շունը և գայլը, հենց ինքը՝ Ջեք Լոնդոնն է:

Մի շարք քննադատական հոդվածներ անդրադարձել են ԱՄՆ նախագահ Թեոդոր Ռուզվելտի՝ նշված վեպերի վերաբերյալ "Everybody's Magazine"-ում տեղ գտած բացասական արձագանքին: Նա Լոնդոնին անվանել է «բնությունը կեղծող»՝ նշելով, որ շներն «*անհեթեթ և անհավատարախ կերպով են հումանիզացված*»(Clark 1907:78-79), ինչը Լոնդոնի կողմից անպատասխան չի մնացել. նա նախագահին անվանել է, մեղմ ասած, սիրողական մակարդակի ընթերցող, որն անտեղյակ է էվոլյուցիայի սկզբունքներին և խորությամբ չի ուսումնասիրել մարդու և կենդանու միջև գոյություն ունեցող առնչություններն ու նմանությունները (Auerback 1995:123-124): Տեղին է մեջբերել գերմանացի իդեալիստ փիլիսոփա Մաքս Շելերի հետևյալ միտքը. «*Մարդը կենդանի է և հավերժ կմնա կենդանի*» (Scheler 1960:87):

Այդուհանդերձ, Լոնդոնը գրում է, որ խախտել է իր «գեղարվեստական կանոնները»: «Նախնիների կանչը» վեպի վերաբերյալ հեղինակն ասել է. «*Ես ակնկալում էի, որ այն կլինի կարճ պատմություն, բայց այն ինձնից շարք հեռու գնաց և 4000 բառի փոխարեն հասավ*

32.000-ի՝ մինչ ես կկարողանայի կանգ առնել» (Labor 1994:230): «Նա չի մտածել, պարզապես ինքնաբերաբար գրել է», - նկատում է Թ.Ռուզվելտը (Auerback 1995:51): Բայցևայնպես, ինչպես գրում է Տրունինը . «Ամեն գեղեցիկ բան ինքնաբերաբար է ծնվում: Օրինակ, Ջեք Լոնդոնի գրչում ինքնաբերաբար ծնվեց Սպիտակ Ժանիքը» (12):

Մեկ այլ նմանատիպ տեսակետ է արտահայտել գրաքննադատ Ջոնաթան Աուերբեքն իր «Խցանված նամակներ. Բաքը և Ջեքի Կանչը» ("Congested Mails": Buck and Jack's "Call") հոդվածում, որը, սակայն, ի տարբերություն նախորդի, բացասական երանգ չի պարունակում: Նա ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում «Նախնիների կանչը» վեպի առաջին նախադասությունը. «Բաքը լրագիր չէր կարդում և դրա համար էլ չգիտի, որ գլխին աղեղ է գալիս»: Սա ««շուն-հերոսին» ներկայացնելու փարօրինակ ձև է, որտեղ «չէր կարդում»-ը իրականում պետք է լիներ «չէր կարող» կարդալ: Այսպես Լոնդոնը կատարում է ընթերցողի հետ միայն պարբերության վերջում պարզաբանելով , որ լրագիր կարդացողը շուն է» (Auerback 1995:60-61):

«Նախնիների կանչը» և «Սպիտակ ժանիքը» վեպերի կերպարների հարաբերություններն ընդհանրություններ ունեն հեղինակի միջանձնային հարաբերությունների հետ: Այս առնչությունները թույլ են տալիս նկատել, որ Լոնդոնն անուղղակիորեն գրել է իր անձի մասին, ինչն ունի հոգեվերլուծական բացատրություն՝ հիմնված Ջ.Ֆրոյդի «**Երազներ և գրողներ**» ("Creative writers and daydreaming", 1907) գրքում երազների մասին տեսության վրա, համաձայն որի՝ երազը հետադարձ հայացքի ինչ-որ տեսակ է, որը մեզ տանում է անցյալի իրականություն: Լոնդոնը հետադարձ հայացք է գցել անցյալ և իր ապրումները վերարտադրել կենդանու միջոցով: Այլ բառերով՝ նա չի ցանկացել լինել այն թշվառ անձը, ում մասին գրել է՝ փոխարենն ընտրելով ավելի հարմար տարբերակ՝ կենդանուն: Սա երազի փոխակերպման տեսակ է, որը հեղինակն օգտագործում է, երբ խուսափում է անցանկալի ճշմարտությունից (10):

Նշված վեպերը գրելու ժամանակահատվածը համընկնում է Լոնդոնի կյանքում ճգնաժամային փուլի հետ. նա հեռանում է առաջին կնոջից՝ Էլիզաբեթ Մադդերնից, և հանդիպում Չարմիան Քիթեջին: Վերջինիս միջոցով նա փորձում է թեթևացնել Էլիզաբեթին կորցնելու ցավը: Այս փոխհարաբերությունները պայմանականորեն արտացոլված են «Նախնիների կանչը» վեպում. Բաքը՝ շունը, որը կորցրել էր սիրելի տիրոջը, բնության գրկում ընկեր է գտնում՝ գայլին, և նրա կողքին փորձում է թեթևացնել տիրոջ կորստի վիշտը:

Գայլին որպես ընկեր գտնելը խորհրդանշական է նրանով, որ գայլը հանդես է գալիս որպես Բաքի նախնիների մարմնացում, իր

արմատների կրող: Վեպում ժամանակ առ ժամանակ գայլը հրապուրում էր Բաքին, կանչում անտառի խորքերը, որտեղից շունը շատ դժվարությամբ էր վերադառնում: Ի վերջո տիրոջ մահից հետո նա տեղի է տալիս վայրի բնության ցասմանն ու վերադառնում այնտեղ, որտեղ իրեն լիարժեք է զգում: Սա հենց Լոնդոնի կյանքի նշված փուլում կատարվող իրադարձությունների ու զգացողությունների ամբողջության պայմանական արտացոլումն է: Լոնդոնը հեռանում է կնոջից և իրեն երջանիկ է զգում Չարմիանի կողքին՝ վերագտնելով իր երբեմնի ազատությունը:

Լոնդոնի և Չարմիանի հետագա հարաբերություններն արտացոլված են հաջորդ՝ «Սպիտակ ժանիք» վեպում. Սքոթը փրկում է մահվան սահմանագծում գտնվող գայլին, ով այլևս անկարող էր պայքարել, և նոր կյանք պարգևում: Սիրո և հոգատարության շնորհիվ վայրի գազանը վերածվում է ընտանի շան՝ հարմարվելով քաղաքակիրթ աշխարհի օրենքներին: Նույնկերպ՝ Չարմիանի շնորհիվ Լոնդոնը հաղթահարում է ճգնաժամը, վերականգնվում և նոր կյանք սկսում: Սա կապված է երազների տեսության մեկ այլ բացատրության հետ. պատրանքների և երազների որոշ տեսակներ կարող են փոխարինվել այլ երազներով՝ կապված երազողի՝ կյանքը նորովի ընկալելու, նոր զգացողություններ ապրելու և բնակավայրի փոփոխության հետ, ինչն էլ հենց տեղի էր ունենում Լոնդոնի կյանքում: «Սպիտակ ժանիքը» որոշ առումներով արտահայտում է Չարմիանի հետ Լոնդոնի՝ քաղաքակիրթ հասարակության մեջ երջանիկ ապրելու ակնկալիքը: *«Մի շարք դժվարությունների միջով անցնելուց հետո Սպիտակ ժանիքը խաղաղություն է գտնում ջերմության և հարմարավետության մեջ: Վերջապես փանիք կունենա: Այլ կերպ լինել չէր կարող. այն չէր ստեղծվել Հեռավոր Հյուսիսի համար»* (12):

Նշված վեպերում կերպարների հարաբերություններն առնչվում են նաև Լոնդոնի և ծնողների միջև հարաբերություններին: Այդ կապը կարելի է դիտարկել՝ հիմք ընդունելով Ֆրոյդի հոգեվերլուծական հայեցակարգերից մեկը՝ *էդիպյան բարդույթը*: Վերջինս, ինչպես հայտնի է, վերաբերում է տղա երեխաների ենթագիտակցականի կամ անգիտակցականի մակարդակով մոր հանդեպ բուռն ցանկություններ (սեռական հակում) և հոր հանդեպ թշնամական խանդի զգացողություններ ունենալուն: Գեր-եսի ձևավորման փուլում երեխան սկսում է ճնշել այդ հակումները մոր նկատմամբ և ձգտում նմանվել հորը: Որոշ դեպքերում նրանում ատելություն է ձևավորվում դեպի մայրը (11):

Այսպես, Սպիտակ ժանիքի մայրը ցանկալի և իմաստուն է գ գայլ է, որն ինչ-որ առումով նման է Լոնդոնի մորը, ով թեև հուզականորեն

անկանոն, բայց միևնույն ժամանակ գրագետ ու խելացի կին էր: Միակնանին՝ գայլի հայրը, ենթադրվում է, որ Լոնդոնի կենսաբանական հայրն է (Ուիլիամ Չեյնի): Գայլի՝ միակնանի լինելը վկայում է Լոնդոնի՝ իրեն լքած հոր հանդեպ տածած բացասական ապրումների մասին: Սպիտակ ժանիքը սառնասրտորեն է ընդունում հոր և մյուս ծագերի մահը, ինչն արտացոլում է Լոնդոնի՝ հոր և քրոջ հանդեպ դրսևորած անտարբերությունը: Միայն հոր մահից հետո գայլը մոր մոտենալու ազատություն է ստանում: Նա մորը շատ է կապվում, և երբ մարդիկ նրանց բաժանում են, օրերով տանջվում է կարոտից՝ կրկին հանդիպելու ակնկալիքով: Եվ նրանք հանդիպում են, բայց մայրը չի ճանաչում իր ծագին, ինչը խորապես վիրավորում է գայլին և աստիճանաբար ատելություն սերմանում մոր հանդեպ:

*Նա հիշում էր մորը փարփամորեն....., իսկ Կիչին(մայրը) մոռացել էր որդուն: Ահեղաձայն մոնչալով՝ Կիչին ափամները կրճտեց նրա վրա.... Մանկությունն ու այդ մոնչոցի իմաստը հառնեցին նրա առաջ:...Հին զգացմունքները վերադարձան...Նա ցարկեց դեպի մայրը, որը սակայն երախաբաց դիմավորեց նրան... (Լոնդոն 1966:103):*

Սա Զ.Լոնդոնի և մոր հարաբերության ճշմարիտ արտացոլումն է: Պատանության տարիքում նա բուռն կերպով արտահայտել է իր սերը մոր հանդեպ, բայց փոխադարձ պատասխան չի ստացել, ավելին՝ մայրը լքել է նրան, ինչի արդյունքում նա սկսել է ատել մորը:

Այլ է պատկերը Ջեքի և ոչ կենսաբանական հոր՝ Ջոն Լոնդոնի հետ հարաբերությունների դեպքում: «Նախնիների կանչը» վեպում Ջոն Թորնտոնը փրկում է շանը դժվարին կյանքից և պահում իր երեխայի պես: Ենթադրվում է, որ Ջոն Թորնտոնը հենց Ջոն Լոնդոնն է, ով Ջեքին իր հարազատ որդու պես է վերաբերվել: Նրանց ոչ միայն անուններն են նույնացվում, այլև հատկանիշները. երկուսն էլ մոտ են բնությանը, երկուսն էլ հոգատար են, և երկուսի մահն էլ մեծ վիշտ է պատճառում:

Այսպիսով, գայլի և շան ապրումները ոչ այլ ինչ են, եթե ոչ հեղինակի ապրումների ճշգրիտ արտացոլումը: Այդ ապրումներով են պայմանավորված կենդանիների վարքային դրսևորումները, որոնք կարող են որոշարկվել և փոփոխվել՝ կախված այն հանգամանքից, թե վարվեցողության ինչպիսի եղանակներ են ընտրում նրանց տերերը:

Սպիտակ ժանիքի աստվածները (նա մարդկանց համարում էր աստվածներ) երեքն են: “They were firemakers! They were gods! (humans)” (London 1905:69) (Նրանք կրակ ստեղծողներ էին: Նրանք աստվածներ էին՝ մարդիկ),-մտածում է գայլը մարդկանց մասին: Գայլի առաջին տերը հնդկացի է (Գորշ Ջրշուն), ով կերակրում ու ապաստան է տալիս կենդանուն: Նա պահում է շանը սայլը լծելու նպատակով: Երկրորդ

տերը՝ Սիրուն Սմիթը, ներքուստ և արտաքուստ գարշելի մարդ է: Աշխարհի հանդեպ ունեցած ողջ ատելությունը նա թափում է գայլի վրա, նրան հալածում՝ օգտագործելով շնամարտերում:

*Սիրուն Սմիթը դաժան էր, ինչպես դաժան լինում են միայն երկչոտները:... հնարավորություն չունենալով իր նմանների վրա իշխել՝ նա էլ օգտվում էր անասունների անպաշտպանությունից (Լոնդոն 1966:123) :*

Բայց նա չի բավարարվում կենդանուն միայն ֆիզիկապես տանջելով և տանջում է նաև հոգեբանորեն:

*Շար շուր նկատեց նա, որ Սպիտակ Ժանիքը չի հանդուրժում, երբ նրա վրա ծիծաղում են, և սովորաբար իր չարչարանքներն ավարտվում էին խլացուցիչ քրքիջի պոռթկումներով (Լոնդոն 1966:125) :*

Երրորդ տերը՝ Ուիդոն Սքոթը, համբերատարության և հասկացողության շնորհիվ կարողանում է Սպիտակ Ժանիքին, որը Սիրուն Սմիթի ձեռքում վերածվել էր վայրի գազանի, վերափոխել քաղաքակիրթ կենդանու: *«Խեղճ: Ամենից ավելի մարդկային փաղաքշանքի կարիք ունի»*, -ասում է Սքոթը (Լոնդոն 1966:143):

Շունն ընկալում է աշխարհն այնպես, ինչպես տերերն են իրեն վերաբերվում: Աշխարհի հանդեպ ունեցած նրա **պատկերացումները կարծես իր տերերի պայմանական հայելին լինեն**: Առաջին տերը չեզոք է, նույնպիսին է գայլի համար աշխարհը: Նրանց միջև չկա սեր, մտերմություն, ընկերություն: Երկրորդ տերը, ատելության մարմնացում լինելով, ստիպում է գայլին ատել ողջ աշխարհը: *«Խելագար աստուծու ձեռքում Սպիտակ Ժանիքը դարձավ դև»* (Լոնդոն 1966:124): Երրորդ տիրոջ կողքին գայլը վերածնվում է:

Այլ կերպ ասած՝ հնդկացին տիրոջ անկողմնակալ տեսակ է. ոչ կոպիտ ու դաժան, ինչպես Սիրուն Սմիթը, ոչ սիրող ու կարեկցող, ինչպես Ուիդոն Սքոթը: *Վերջինս միակն է , ով հասկանում է , որ կենդանի արարածը կարիք ունի ավելի, քան պարզապես կերակրվելն է. նա ունի ուշադրության և սիրո կարիք: Հեղինակը գրում է. «...Եվ ազատության մեջ ծնված գայլը դառնում է շուն, որում թեև շար էր գայլայինը, բայց և այնպես, նա շուն էր, ոչ թե գայլ»* (Լոնդոն 1966:104) :

Լոնդոնը ցույց է տալիս, որ մարդ-կենդանի հարաբերությունները ոչնչով չեն տարբերվում մարդկանց միջև եղած հարաբերություններից. այստեղ ևս գործում է **«սերը սեր է ծնում»** գաղափարը:

Եթե բնության գրկում ծնված գայլը երբևէ չմոտենար մարդու վառած կրակին, կմնար այնպիսին, ինչպիսին ստեղծել է նրան բնությունն ի սկզբանե, և հյուսիսը նրան իսկական վայրի գայլ կդարձներ: Բայց հասարակության մեջ հյուսիսից մնացած բնազդներն ու հակումները

նրանում ասիճանաբար միաձուլվում են միջավայրի թելադրած նոր հատկություններին: «Մոր՝ կիսով չափ շուն լինելը նրան  $\frac{3}{4}$  գայլ էր դարձնում, ինչը ստիպում էր իր կամքից անկախ ձգտել մարդկանց: Նրանում շան նվիրվածության գոյությունը նոսրացնում է գայլի արյունը և փարածայնություններ առաջացնում կյանքի համար պայքարելու անհրաժեշտության ընկալման հարցում» (12): (

**«Նախնիների կանչը»** վեպը ևս կառուցված է շան՝ Բաքի, և նմանօրինակ տերերի միջև ձևավորվող հարաբերությունների համատեքստում, պարզապես սա նախորդի հակապատկերն է՝ քաղաքակրթությունից անցում դեպի վայրի բնություն, որտեղ շունն ի վերջո վերադառնում է իր արմատներին՝ արթնացնելով վայրի գազանի բնագղները:

Վեպի գլխավոր հերոս Բաքի առաջին տերը դատավոր Միլլերն է, որը շանը նվիրել է բարեկեցիկ կյանք, բայց նրանց միջև չկա մտերմություն ու սեր: Սա չեզոք տիրոջ տեսակ է: Սիրուն Սմիթի պես, դաժանության մարմնացում կարելի է համարել վեպում անանուն մի կերպարի, ում Լոնդոնը կոչում է «կարմիր սվիտերով մարդ»: Բաքը հաճախ էր հիշում այդ մարդուն, քանի որ նրանից առաջ ու հետո ոչ ոք իրեն այդպիսի ցավոտ դաս չէր տվել: Բաքը մահվան ճիրաններում էր, երբ Ջոն Թորնտոնը փրկում է շանը և նոր կյանք պարգևում: Նա սիրում է շանը, հոգ տանում նրա մասին: Հետագայում Բաքը շատ անգամներ է փրկում տիրոջ կյանքը: Բաքին տանջում էր անտառից եկող այն խորհրդավոր կանչը, որը նրա հոգում բուռն ցանկություններ էր արթնացնում: Բայց նա ոչ մի անգամ չի լքում տիրոջը և միայն նրա մահից հետո է տեղի տալիս վայրի ցասմանը: Ի դեպ, երկու շներն էլ հնարավորություն են ունենում լքելու տիրոջը, բայց երկուսն էլ նախընտրում են մարդու ընկերակցությունը:

Երկու վեպերում էլ մարդ-կենդանի կապը սկզբունքորեն ձևավորվում է նույն հարթության վրա, որովհետև կենդանու տերերն ընտրված են նույն չափորոշիչներով: Այսինքն, կենդանու և տերերի հարաբերությունների տրամաբանական զարգացումը նույնն է՝ չեզոք, բացասական, դրական:

Գրաքննադատ Ռ. Բենիթն իր «Ջեք Լոնդոնի «Նախնիների կանչը» հոդվածում գրում է. «Այն (վեպը) քաղաքակրթության թուլացնող ազդեցություններից ազատվելու պայքար է» (Benoit 1968:247): Եվ այդ պայքարն էլ հենց Լոնդոնի կյանքն է. նա երազում էր դառնալ քաղաքակիրթ հասարակության մի մասնիկը, և իր երազանքին հասնելուց հետո հասկացավ, որ կյանքն ամենևին էլ այնպիսին չէ, ինչպիսին էր իր երևակայության մեջ: Նրա երազը ձախողվում է, և նա



որոշում է վերադառնալ բնություն, հասարակ կյանք՝ փորձելով կտրել քաղաքակրթության հետ ունեցած կապերը, որոնց արդեն այնքան ամուր էր կապված:

Եվ այսպես, որպես եզրահանգում կարող ենք ասել, որ Ջեք Լոնդոնն իր երկերում կենդանի – հերոսին օժտել է գրեթե մարդկային բանականությամբ, գիտակցությամբ ու զգացմունքներով, ըստ այդմ՝ մարդ-կենդանի աղերսները զարմանալի նրբությամբ քննելով մարդ-մարդ փոխհարաբերությունների մակարդակում: Ի վերջո, մարդ-կենդանի հարաբերությունը միջոց է, որը տալիս է ավելի ընդարձակ ազատություն՝ պատկերելու զգացմունքների այն հեղեղը, որը, թերևս, նույն արտահայտությունը չէր ստանա զուտ մարդկային հարաբերություններին բնորոշ վարքային սահմանափակ դրսևորումների շրջանակներում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ REFERENCES

1. Լոնդոն Ջ. «Նախնիների կանչը» //Երկերի ժողովածու, հատոր 2, թարգմանությունը՝ Վ. Տալյանի, Երևան, «Հայաստան» հրատ., 1965: London J. «Naxnineri kanchy»՝ //Erkeri jhoghovac'ow, hator 2, t'argmanowt'yowny" V. Talyani, Er&an, «Hayastan» hrat., 1965:
2. Լոնդոն Ջ. «Սպիտակ ժանիք», //Երկերի ժողովածու, հատոր 4, թարգմանությունը՝ Վ.Միքայելյանի, Երևան, «Հայաստան» հր., 1966 [https://lib.mskh.am/images/books/Spitakjaniq\\_J.London.pdf?fbclid=IwAR1PCFy37yrLt3pN\\_YtA4lihLnMepDhWAax6kdbYFPAH9atzT7a4S09U\\_v4](https://lib.mskh.am/images/books/Spitakjaniq_J.London.pdf?fbclid=IwAR1PCFy37yrLt3pN_YtA4lihLnMepDhWAax6kdbYFPAH9atzT7a4S09U_v4) (Այս վեպի բոլոր հատվածների էջերը տե՛ս կից մեջբերումներին՝ ըստ առցանց հղման էջերի): London J. «Spitak jhaniq», //Erkeri jhoghovac'ow, hator 4, t'argmanowt'yowny" V. Miqayelyani, Er&an, «Hayastan» hrat., 1966
3. Auerbach J., "Congested Mails: Buck and Jack's "Call", American Literature, Vol. 67, No. 1, Duke University Press, Mar., 1995, pp. 51-76 .
4. Benoit R., Jack London's "The Call of the Wild", American Quarterly, Vol.20,No. 2,Part 1, The Johns Hopkins University Press, Summer,1968, pp. 246-248.
5. Edward B. Clark, Roosevelt on the Nature-Fakirs, Everybody's Magazine, June 1907, 770-74; supplemented by Theodore Roosevelt, "Nature Fakers," Everybody's Magazine, September 1907, 427-30.
6. Labor Ear., Reesman, Jeanne C., London Jack,New York: Maxwell Macmillan International, 1994.

7. London, J., "White Fang". New York: Macmillan, 1905.  
<https://www.classicy.com/bibi/pre.html?book=129.epub>.
8. London J., The Other Animals, Collier's, Everybody's Magazine , 5 September 1908, 10-11, 25-26.
9. Scheler M., On the Eternal in Man, "The Essence of Philosophy and the Moral Preconditions of Philosophical Knowledge" trans. Bernard Noble (New York: Harper & Brothers, 1960 .
10. Creative Writers and Day-Dreaming  
[https://www.evergreen.edu/sites/default/files/alumni/images/Freud\\_Creative\\_Writers\\_Daydreaming.pdf?fbclid=IwAR1gLLTEdss7eft2Qltpoj\\_trc5jPGzZCrDwj2OXm\\_](https://www.evergreen.edu/sites/default/files/alumni/images/Freud_Creative_Writers_Daydreaming.pdf?fbclid=IwAR1gLLTEdss7eft2Qltpoj_trc5jPGzZCrDwj2OXm_)
11. The Oedipus Complex  
<https://journals.sagepub.com/doi/pdf/10.1177/070674377602100308>
12. Константин Трунин, Джек Лондон, Белый клык 1906. Konstantin Trunin, Dzhhek London, Belyj klyk 1906  
[http://trounin.ru/london906/?fbclid=IwAR2CG-VCyKdObOfDndTQIEj-1J5XnysKWdColurP4ox2061IRp3raR0\\_-No](http://trounin.ru/london906/?fbclid=IwAR2CG-VCyKdObOfDndTQIEj-1J5XnysKWdColurP4ox2061IRp3raR0_-No)

#### **МАРИАМ АКОПЯН - ВЗАИМОСВЯЗЬ ЧЕЛОВЕК-ЖИВОТНОЕ В ПОВЕСТЯХ ДЖ. ЛОНДОНА**

**Ключевые слова:** цивилизация, гуманизация, межличностные отношения, дикая природа, теория сновидений, Эдипов комплекс, животное-герой

Когда сталкиваются цивилизация и дикая природа, борьба за существование становится неизбежной. В повестях Джека Лондона "Белый клык" и "Зов предков" на грани этих двух взаимоисключающих и одновременно взаимосвязанных миров стоит герой - животное, чувства и поведенческие проявления которого являются результатом человеческого влияния. В статье исследуется не только ассоциация героя-животного с автором в указанных выше обстоятельствах (исследование проводится в рамках анализа сходства между отношениями персонажей и межличностными отношениями автора, приняв за основу психоаналитическую теорию Фрейда, в частности, теорию сновидений, Эдипов комплекс), но и, в основном, особенности связей человек-животное и обусловленные ими психологические факторы, которые, по сути, логически переплетаются с первой проблемой.

**MARIAM HAKOBYAN - HUMAN-ANIMAL INTERCONNECTION IN THE WORKS BY J. LONDON**

**Keywords:** *civilization, humanization, interpersonal relationships, the wild, dream theory, Oedipal complex, animal-protagonist*

When civilization and the wild collide, the struggle for existence is inevitable. In Jack London's novels "White Fang" and "The Call of the Wild", the animal-protagonist stands on the border of two contradictory and simultaneously interrelated worlds, its feelings and behaviour are totally the result of human influence. The article examines not only the affinity of the struggling animal-protagonist with the author (which is studied in the framework of the analysis of the generalities between the characters' relations and the author's interpersonal relationships, based on Freudian psychoanalytic theories, particularly, dream theory and Oedipal complex), but also the characteristics and psychological features of human-animal interrelation in general, which is, in fact, logically linked to the previous problem.

**Ներկայացվել է՝ 20.09.2021**

**Գրախոսվել է՝ 20.09.2021**

**Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի ամբիոնի կողմից՝ 27.10.2021**